II

Առաջադրած հարցին՝ ո՞րն է մեր ազգային քաղաքականութեան առարկան, *անմիջապէս տանք պատասխան:*

Դա մէկ է, եղակի, եւ նրա անունն է՝ Հայաստան:

Թերեւս այսօր դա համարուի ոմանց կողմից այնչափ պարզ, այնչափ հասկանալի, որ անդամ աւելորդ սեպուի նրա առաջադրութիւնը: Եւ սակայն, թողնելով իսկ մէկ կողմը աւելի հեռուն, յիշենք վերջին տարիների անցեալը: Արդեո՞ք հայութեան հաւաքականութեան, նրա բոլոր տարրերի ու խմբակցութիւնների համար անխտիր ու հաւասար չափով վճռորոշ՞ խնդիր էր, թէ այո՛, Հայաստանն է մեր ազգային քաղաքականութեան միակ առարկան, մեր ձգտումների կէտ-նպատակը, որից դուրս չկայ եւ ոչինչ, որ ընդունելի լինէր մեզ համար. միակ անփոխարինելի անօթը հայ ազգային իդէալի:

Ի հարկէ կար: Եւ դեռ չգիտեմ, թէ ներկայիս արդեօք որոշ շրջանակներ վերջնապէ՞ս հրաժարուել են քաղաքական այն հեռանկարից, համաձայն որի Հայաստանին կից եւ կամ նրանից դուրս Կիլիկիայում *կամ այլուր որոնելու եւ տեղաւորելու է այդ անօթը: Աւելին դեռ:*

Ես չեմ համոզուած, թէ անդամ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերում կատարելապէս արմատախիլ եղած է նման մի մտայնութիւն, լինի նա տեղաւորուած թէկուզ բացառիկ անհատների ուղեղում: Երբ ուրեմն դեռ երէկ էր, որ շատեր Կիլիկիան կամ Կիլիկիան եւս համարում էին հայ պետականութեան կորիզ, երբ երէկ էր, որ այժմեան Հայաստանից դուրս եւ նրանից բաժան «Հայկական Օճախ» էին որոնում մարդիկ — այսօր վերջակէ՞տ է դրուած նման պատրանքների — ապա ուրեմն որչափ յաճախ կրկնուի այն քաղաքական ճըշմարտութիւնը, թէ Հայաստանից դուրս չկայ մեզ համար ոչ փրկութիւն, ոչ էլ մի հատիկ կորիզ, այնչափ լաւ մեր քաղաքական դաստիարակութեան համար:

Եթէ այս այսպէս է, եթէ այսօր մեզնում գոյութիւն չունի եւ ոչ մի խմբակցութիւն, որ հրապարակաւ տարրեր տեսակէտ պաշտպանի, ապա ուրեմն ազգային գերագոյն շահերի տեսակէտից համապատասխան ձեւով էլ պիտի որակուի ամէն մի փորձ հակառակ կամ տարբեր ուղղութեամբ, ամէն մի քայլ, որ Հայաստանից դուրս հայութեան համար հայրենիք կ՚որոնի:

Խօսքը հարկաւ մեր ժողովուրդի ցրիւ հատուածների ժամանակաւոր հարկադրեալ բնակավայրերի ու բոյների մասին չէ, որոնք պարզ օթեւանների հանդամանք միայն ունենալ կարող են: Թող այս վերջինները լինին թէկուզ շատ նպաստաւոր պայմաններում գրուած: Դրանք երբեք եւ ոչնչով չեն կարող հայրենիքը փոխարինել՝ իրենց վրայ հաստատուած մեր բազմութիւնների համար: Աւելի շատ՝ դրանք մեր աչքում մեր սեփական հայրենազրկութեան, մեր քաղաքական դըժբախտութեան մի-մի խորհրդանիշներն են, մի-մի աղաղակող վկաներ՝ մեր ազգային օրգանիզմի ջլատման փաստի:

Կարճ՝ հայ ազգային քաղաքականութեան առարկայի *շուրջը այսօր ստեղծուած է մեղնում, աւելի կամ պակաս ուժեղ, մէկ ճակատ: Թանգ, շատ սուղի է նստել մեր ժողովուրդին հասարակական մտքի այդ զարգացումը, բայց վերջապէս նա փաստ է այսօր, թէեւ տակաւին տկար փաստ:*

Այս իմաստով էլ պիտի մօտենալ Միացեալ Հայաստանի *դաղափարին:*

Սերունդների նախապատրաստած եւ 1919 *թ. մայիս* 28*-ին հանդիսաւորապէս հռչակուած «Միացեալ Հայաստան» դաղափարի մեծ խորհուրդն էլ այն է, որ միանդամ ընդմիշտ վերանում է հայ ազգային իդէալի երկճիւղ, անդամ եռաճիւղ եւ բազմաճիւղ պատկերացումը, եւ նա փոխարինում է, միանդամ ընդմիշտ, միասնական, համազգային իդէալով — Միացեալ Հայաստանով: Երկու եւ աւելի ճակատների փոխարէն այսպիսով ստեղծւում է մէկ ճակատ, այդ փաստով իսկ վերջինս դառնում է աւելի կայուն ու զօրաւոր:*

Եւ սակայն երբ մենք ասում ենք Միացեալ Հայաստան, *երբ մենք այդ դարձնում ենք մեր ազգային քաղաքականութեան գերագոյն առարկան, այդ չէ նշանակում տակաւին, թէ մենք նրա իրականացումն էլ համարում ենք*